ԿԻԼԻԿԻԱ

ՀԱՆԳԷՍ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ | 1874 ՀՈԿՏԵՄԲԵՐ 15 | ԹԻՒ 3

ԱԶԴ

Թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ գաւառացի Ազգայնոց, հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք որ բարեհաճեցան իրենց բաժանորդագրութեամբը հանդիսիս յարատեւութեանը նպաստել, որով ոչ միայն մեծապէս պաշտպանած կը համարուինք Ազգային գրականութիւնն ու յառաջադիմութիւնն, այլ միանգամայն առիթ եղած կ'ըլլան մարդուս թէ՛ ներկայ և թէ ապագայ բարւոքեցութիւնն ապահովցնող խոստ կարեւոր և անհրաժեշտ գիտութեան, այն է Առողջաբանութիւնն Ազգին մէջ ընդհանրացնել։

Իսկ երկու ամիսէ յետոյ, յաջորդաբար ամէն 100 բաժանորդաց համար յատկացեալ 60 թիւ երկու տեսակ արժեթղթերը Տ. Բօրիչօներ հանրածանօթ սեղանաւորին (որոյ վաճառատունն է Ղալաթիա, Քօմիսիօն խանին առջի թիւ 41) յանձնած ըլլալնուս, որ բարեհաճեցաւ այս պաշտօնն ընդունիլ ի նպաստ և ի յառաջադիմութիւն Կիլիկիոյ, վերոյիշեալ սեղանաւորին երաշխաւորութեամբը վաւերացեալ է, վոխանակ Տէմիրգաբուլեան և Ընկերութեան որ հրատարակած էինք, ամէն բաժանորդաց ուղարկած մասնաւոր նամակնուս մէջ։

Պարտք կը համարինք ծանուցանել ամենագամայն Մեծարգոյ բաժանորդաց և գործակալաց, որ յետ այսօրիկ Հանդիսիս կեդրոնատեղին է Լանկա, եէնի սօքաք թիւ 2 Գրասենեակնիս։ Մեզ ուղղեալ նամակք վերոյիշեալ հասցէիս մեր ձեռքը կրնայ հասնիլ անկորուստ։

Ուղղը կրնայ նաեւս բաժանորդ դրուիլ, գաֆֆէեան դրատունէն, որ կը գտնուի ի Զաքմաքճըլար թիւ 16։

Ա. ՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1.

Չկայ դիտութիւն մը որ Առողջաբանութեան նման և ամենանհրաժեշտ կերպիւ օգտակար ըլլայ. չկայ նաեւս դիտութիւն մը, որ Առողջաբանութեան նման և աստիճան անծանօթ մնացած չըլլայ, չէ թէ միայն մեր ազգէն, այլ ընդհանրապէս մարդկային սեռէն, ասկ անուրանալի է և պէտք չունի ապացուցանել:

Եւրոպիոյ լուսաւոր ազգերը հազիւ սկսած են ճանաչել այն կենսապահիկ դիտութեան ոչ միայն կարեւորութիւնն, այլ քան ամենայնի համեղուած են նորին անհրաժեշտութեանը: Վասն զի մէկ քանի տարիներէ ի վեր սկսուած է, ընդհանրապէս բոլոր Համալսարանաց և վարժարանաց մէջ, Առողջաբանութիւնն ուսմանց չարքը և ցանկը մտնել, ուր երբեմն միմիայն Բժշկական Համալսարաններու և ճեմարանաց յատկացեալ էր, ուր բժշկութեան աշակերտաց միայն առողջաբանութեան դաս կ'ա-ւանդուէր. դժբաղտաբար Տաճկաստանի և մեր Ազգին մէջ դեռ չենք տեսներ:

Խօսքը միայն մեր Ազգին դաստիարակով, ազգային վարչութեան Ուսումնական խորհրդոյ մեծ և առաջին պարտքն է, այս մեր ընդհանուր և առաջարկութիւնն ուշադրութեան առնել. բայց քանի որ չենք տեսներ մեր Ազգ. Ուսումնական խորհրդոյ մէջ, այնպիսի անդամներ որք բժշկական արհեստին անտեղեակ ըլլալէ զատ, և ոչ մէկը գիտէ թէ ի՞նչ է Առողջաբանութիւնն և որչա՞փ կարեւոր և անհրաժեշտ է նորա ուսումն ամէն կարգի աղգայնոց. վասնորոյ այս պակասը լեցնելու համար, Ազգ. Ընդհ. ժողովոյ պարտքն է, Ուսումնական ժողովոյ ընտրութեան առեն այնպիսի երեսփոխաններ ընտրեն որք գիտնան թէ ի՞նչ է Առողջաբանութիւնն և հետեւաբար որչափ կարեւոր և անհրաժեշտ է ազանի Ազգային բոլոր վարժարանաց և դպրոցաց մէջ անխտրաբար դասախօսել տալ:

Մեր այս առաջարկութեան ամենակարեւոր ըլլալն աւելի ղգալի ընելու համար խօսինք թէ՝ որչա՞փ պէտք է առողջաբանութիւնը մարդուս. անխտրաբար ամեն հասակի, սեռի, աստիճանի և վիճակի. ղի այնպիսի գիտութիւն մ'է, որ մարդս

բարւոք , հանգիստ , առողջ և երջանիկ ապրիլ կը սովրեցնէ . գիտութիւն մ'է որով միայն մարդս կրնայ սովրիլ թէ ի՛նչ եղանակ ապրելով կարելի կ'ըլլայ . բաղնատեսակ և բաղմաթիւ հիւանդութիւններէ աղատ ըլլալ . գիտութիւն մ'է այս , որ ոչ միայն առողջ ապրիլ կը սովրեցնէ (որ ըստ ինքեան մեծ բան է) այլ միանգամայն տկար կազմուածքները ուժովցնելու , և խիստ ուժով ու չափազանց արիւնոտ կազմուածքները բարեխառնելու կ'նպաստէ : ի՞նչ է մարդուս աշխատութեան նպատակը , անդուլա բարւոքկեցութիւնն . ի՛նչ են ամեն տեսակ գիտութեանց , գիւտից և հնարից նպատակն և օգուտն , անդուլա ազգայ և ժողովրդոց յառաջադիմութիւնն , այսինքն՝ մարդուս և անհատի բարւոքկեցութիւնը :

Լոնտոն , Մայրաքաղաք Մեծին Բրիտանիոյ , որ երբեմն կեդրոն էր ժանտախտէ , իր փողոցներուն անելութեամբը , նեղութեամբը , խոնաւութեամբն ու մթութեամբն , ուր արեւուն կենսատու ճառագայթներն անկարող էին թափանցել . ուր թացութիւնն ու փոսը մշտնջենաւորապէս կտիրէին , ուր վոխանակ մաքրութեան , գարշահոտութիւնն , աղտն ու ճեղճը կտիրէին բնակութեանց , նստելու , աշխատելու և պառկելու սենեակներուն մէջ օդն աղատորէն շրջան չկարենալ ընելուն . իսկ այսօր առողջ կլիմայի փոխուած է , որովհետեւ փողոցները լայնցած , մաքուր օդն , արեւն և իր կենսատու ճառագայթները թէ փողոցներուն և թէ բնակարանաց մէջ աղատորէն և պէտք եղածին չափ կթափանցեն և շրջան կընեն . ասոր համար է որ Լոնտոնի մէջ երբեմն , եթէ տարին 0/0 40 հոգի կը մեռնէին , այսօր 0/0 ին 14 ի իջած է , որ ըսել է 0/0 ին 30 տարբերութիւն գտած է . ինչ զգալի և մեծ յառաջադիմութիւն . եթէ մէկ տարուան մէջ մեռելներուն թուոյն տարբերութիւնն յառաջ բերինք , ընթերցողաց հասատատելու համար է թէ , որչա՛փ կարեւոր է Առողջաբանութիւնն , որ կսպասցուցանէ թէ մարդս , ի՛նչ ազգէ և կրօնքէ ըլլայ , թէ հարուստ և թէ աղքատ , տէր կամ ծառայ , թէ արու և թէ էգ , երիտասարդ կամ հասուն , թէ ամուսնացեալ ըլլայ և թէ այրի , ծեր կամ տղայ ապրելու համար ամենքն ալ սնունդի , հագուստի , բնակարանի պէտք ունին անխտրաբար . սոքա այնպիսի պիտոյքներ են , որ առանց սոցա ապրիլն անկարելի է . ուստի քանի որ անհրաժեշտ են , պէտք է որ մարդս գիտնայ թէ՝ ի՛նչ , ի՛նչ-

պէս , որչա՛փ և ե՛րբ ուտելու , խմելու , հագուելու , նստելու , աշխատելու և պառկելու է : Որովհետև ինչ որ ալ ուտէ մարդս , նպատակն է և ըլլալու է , մարմինը սնուցանել , և օրուան աշխատութեան առթիւ , մարմնոյն կրած հոդնութիւնն ու վնասը լեցնել , որով ըսել կ՛ուզենք թէ մարդս ուտելու է , ըստ հասակի , սեռի , աշխատութեան , կլիմայի , եղանակի , օրուան ժամու , և միանգամայն ըստ մարմնական առողջութեան և հիւանդութեան . ըսել կուզեմ թէ մարդուս սնունդը կամ կերակրը տղայութեան , երիտասարդութեան , ծերութեան , բնական կլիմային , հիւանդութեան և առողջութեան առեն միշտ միևնոյն քանակութեամբ և որպիսութեամբ ըլլալու չէ և չը կրնար ըլլալ առանց վնասի . ասկ կարելի է սովրիլ միմիայն առողջաբանութեամբ , և ոչ թէ ֆիզիքով , տարրաբանութեամբ մաթէմաթիքայով , դաշնակաւ և լեզուադիտութեամբ . . . . ինչպէս մարդս , ինչ ազգէ , կրօնքէ , հասակէ , սեռէ , վիճակէ ըլլայ , և որ կլիմայի մէջ ալ որ ապրի , սոսկալի է անհրաժեշտաբար առաւօտուն նախաճաշել : Եւ մարդ մը առաւօտուն նախաճաշի համար 100 տրամի չափ հայի հետ 20 փարայի կաթով , հաւկիթով , միսով , պանիրով , բրինձով , լուբիայով , ձիթապտուղով , մածունով ալ կրնայ կշտանալ և գործածել , բայց վերոյիշեալ 8 տեսակ կերակուրներով ալ ոչ միևնոյն սնունդը կառնու , ոչ միևնոյն յիժը կը գտնէ , կ՛չահի , և ոչ ալ ամէնքը միևնոյն ժամանակին մէջ կ՛մարսէ . ինչպէս՝ կաթն , ամէնէն դիւրամարսն , ամէնէն սննդարարն և ամէնէն օգտակարն է . պէսպէս ընթերցմամբ ամէնէն ընտիրն և խանգամընթերցմամբ ամէնէն քիչն է . եթէ մարդս՝ լուբիան , բրինձն , 3 կամ 4 ժամուան մէջ կ՛մարսէ կաթը մէկ քառորդի , կամ առ առաւելը կէս ժամուան մէջ . միևնոյն բաղդատութիւնն ընելով վերոյիշեալ 8 տեսակ կերակրոց վրայ միևնոյն տարբերութիւնները կը գտնենք . բայց այս տեսակ խնդրոց վրայ , մասնաւոր յօդուածներով լուսիլ որոշած ըլլալնուս , այսօր միայն սա հասկցնել կուզենք ընթերցողաց թէ պրոֆեսէօր՝ մարդս ինչ որ ալ ըլլայ , ինչ ազգէ , կրօնքէ , սեռէ և հասակէ . թէ և ըլլայ հարուստ , աղքատ , տէր , իշխան կամ ծառայ , ամէնքն ալ անխտրաբար ամէն առաւօտ անհրաժեշտաբար նախաճաշիկ պիտի ընեն , չափ մը հացով որ և է ուտելիք մը՝ կաթ , ձու , պանիր , կարագ , մեղր , սուրճ , չայ , ձիթապտուղ , թայլինով հելվա կամ որ և է չոր կամ թաց պտուղ-

ներ, որոնց ամէն մէկին համար առ սակաւն 10 կամ 20 փարայ պիտի վճարէ առանց հացին դինը հաշուելու. ուստի երբ գիտնայ թէ իր նախաճաշիկին համար գործածածներուն մէջէն ամենէն անդարարն, ամենէն աւելի դիւրամարսն, և մանաւանդ ամենէն աւելի օգտակարը կաթն է, քանի որ կաթով նախաճաշիկ ընելու համար աւելի դին չպիտի վճարէ ուրիշ ուտելիքներու վրայ, անշուշտ կաթը պիտի գործածէ լինչպէս կրնան բոլոր եւրոպացիք ընդհանրապէս: Եթէ չատեր առաւօտները կաթ ուտելու սովորութիւն չունին. չէ թէ աղքատ ըլլալնուն համար է՝ այլ չգիտնալնուն. զի եթէ փոխանակ կաթ ուտելու, պանիր, ձիթապտուղ, ձուին հետ կամ չոր ու թաց պտուղ կ՝ գործածեն: Մինոզք իրենց ղաւակաց չէ թէ ասոնք ձրի կառնուն կամ գրկել կուզեն՝ այլ սովորութիւն չունին, որն որ ծնունդառած է տգիտութենէ, մանաւանդ Առողջաբանութիւն չը գիտնալէ:

Միևնոյն գիտցուիլը կրնանք ընել ցերեկուան և երեկոյեան կերուած կերակուրներուն, գործածուած հագուստներուն, նստուած բնակարաններու վրայ ևայլն, որոնց մէջ միշտ տգիտութիւնը պիտի գտնենք:

Ուստի իրաւամբ կրնանք կրկնել թէ Առողջաբանութիւնն այնպիսի կարեւոր գիտութիւն մ՝է որ մարդս պէտք է ջանի ուսանիլ, իր մայրենի լեզուն սովրելէն յետոյ կամ միանգամայն ջանի սովրելու առեն:

Մալէնգօթ, Թիւրքին բժշկական Համալսարանին բնաջնջնութեան դասատուն ըսած և ապացուցած է թէ՝ բնաջնջնութիւնն և Առողջաբանութիւնն ոչ միայն բժշկականութեան հիմունքն են և ըլլալու են, այլ միանգամայն մարդկային դաստիարակութեան հիմունքը. պէտք է տղայ հասակէն սկսեալ բնաջնջնութեան և Առողջաբանութեան սկզբունքները մօրմէ տղուն անոյնին մայրական կաթին հետ, որովհետև տղայ հասակին մէջն է որ աղեկ կամ դէշ առողջութեան հիմունքը կը հաստատուին: Եւ այն բազմաթիւ հիւանդութեանց աղբիւրն, որք մարդուս կեանքը կը թշուառացնեն, կ՝ըսէ Թուրմել առողջաբանն, ոչ միայն ծնողաց պակասութենէն մէջ բնառելու է այլ միանգամայն դաստիարակութեան:

Սերմանէ բարեբեր երկրի մը մէջ հատիկը, ջրէ զանի, վրնասող ճճիներն և որդերը հեռացուր, խնամէ գեռաբոյս տունկը,

տուր պէտք եղած սնունդը ժամանակին, պիտի ունենաս ա-պագային գեղեցիկ, ուժիլ, առողջ և պտղատու ծառ մը։ Նմանապէս, աղէկն ալ հասիկն է, խնամէ զանի, ծնած օրէն սկսեալ, սիրէ զանի, գգուէ զանի, ցցուր միշտ ժպիտ դէմք մը, զբօսցուր զանի, տուր միշտ բարի օրինակները, և հետեւաբար ապագային պիտի ունենաս, առողջ, կորովի, ուժով, բարի, խելացի և օգտակար մարդ մի, առ անձն, առ ընկերն և առ Հայրենիս։

Ոչ ոք կարող է ուրանալ, պատմութեանց, հին լեզուաց, գեղարուեստից օգուտն և կարեւորութիւնն. անօգուտ էին և կըլլային, եթէ նոցա նպատակը մարդուս բարւոք կեցութիւնն և Առողջութիւնը չըլլային։ Մեքենական ամէն տեսակ արհեստներն, եթէ մի առ մի քննենք, ամենքն ալ օգտակար կը գտնենք, ոմանք մարդուս առողջութեան պահպանութեանը կծառայեն, ոմանք ալ կենցաղավարութիւնն աւելի կդիւրացնեն։ Ինչ զարմանալի հակասութիւն. մարդիկս կսովրինք բնութիւնն, երկրագնիս (ուր կբնակինք) բաղադրութիւնն և իր ամեն մէկ մասանց չարժմունքը, բայց բնաւ երբէք, ինքզինքնիս։

Ի՞նչ է դիտութեան նպատակն, եթէ ոչ ճշմարտութեան ճանաչումը, ժողովրդոյ և ազգայ բարւոք կեցութիւնը, թըշուառութեան օր քան զօր ոչնչանալը, հիւանդանոցայ, դատարանայ, բանտերու թուոյ հետզհետէ պզտիկնալը, մէկ խօսքով ապրիլ, բայց ապրիլ, ապրիլն ղգալով։ Բայց ինչպէս ապրիլ գիտնալ, եթէ նախ չսովրուի թէ ինչ է կենաց կազմութիւնը, բնաղնութիւնն որ մայր է դիտութեանց։ Կարելի է մեկնել և հասկնալ առանց բնաղնութեան, Թաղեսի ըսած ծանիջ ջանի։ Եթէ ընդունուած է թէ այս դիտութիւնն է հիմն ամենայն դիտութեանց, պէտք է որ ըլլայ նաեւ ժողովրդոյ, ազգայ, մէկ խօսքով ընդհանուր մարդկութեան դաստիարակութեան հիմն և սկիզբն. որովհետեւ եթէ նա մեզ կսովրեցնէ թէ ինչ-համար, ինչպէս և ինչկընենք, ինչպէս կաշխատին թռքերը, նա է նաեւ մեզ սովրեցնողը թէ մարդուս ուղեղն ալ իր յատուկ պաշտօնն ունի. իր պաշտօնն ալ այնչափ կարեւոր է մարդուս առողջութեանն որչափ կարեւոր են թոքերու և ստամոքսի պաշտօնները. թէ ըստ առածոյն Անգլիացւոյ մարմնով և ոգւով առողջ ապրելու համար, չէ բաւ միմիայն

ոտքել, խմել, ուխտագնաց և ձեռնադիր իբրեւ մեքենայ, այլ միանգամայն պէտք է ջրել, կոչել, խոսիլ և մտածել, մեկ խօսքով, պէտք է որ մարդուս կազմուածքին բոլոր պաշտօններն ալ, կանոնաւորապէս և համեմատաբար ըստ հասակի, սեռի, արհեստի և կլիմայի դործեն։ Պէտք չէ երեւակայել թէ, ջէպոնական ըլլալու համար, մարդուս կեանքը միայն խորհելով անցնելու դատապարտեալ է, և ոչ ջրջաւոր ըլլալու համար միմիայն իբրեւ մեքենայ աշխատելու է. դիտնական և դործաւոր ունենալով միևնոյն մարմինով հանդերձ միևնոյն պաշտօնները, պէտք է որ թէ մին և թէ միւսն, ըսենք ամենքն ալ խոկան և աշխատին միանգամայն, որպէս դի պաշտօններուն հաւասարակշռութիւնն իր ներդաշնակութիւնը չկորնչնէ. առանց բնաւընական սոյն անհրաժեշտ պայմանի, մարդուս առողջութիւնը միշտ պիտի վնասի, ուսկից երբեմն ջղային դրութեան հիւանդութիւնները, երբեմն ալ վիրաբուժական հիւանդութիւնները պիտի ծնին . . .։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Բ.

Ա. Առաջին խօսակցութեան մէջ, մարդուս անդամազննութեան վրայ խօսելով, մի առ մի յառաջ բերինք, իր կազմուածքին բաղադրութեանը մէջ մանող ամեն տեսակ մարմիններն, և որոնց վրայ մանրամասնաբար խօսիլ խոստացաք, վասն որոյ խնդրեմ՝ որ բարեհաճիք այսօր նոյն տեղեկութիւնները տալ։

Բ. Արդարև մարդուս մարմնոյն հիմն է ոսկորները, որ ամենը մեկէն ոչնչուի։

Ոսկերատին չինուած է բազմաթիւ կարծր կտորներու միութեամբն, որ կկոչուին ոսկր, ասոնք իրար միացած են զանազան կապերով, որոնցմով ոսկերք կշարժին։

Ա. Քանի՞ ոսկորներէ կբաղկանայ կամ չինուած է մարդուս ոսկերատին։

Բ. Մարդուս ոսկերատին չինուած է ընդամէնն 206 (երկու հարիւր վեց) ոսկորներէ. ինչպէս .

1. Գլխի՝ որ կբաղկանայ 6 կարծր և տափակ ոսկորներէ, որք իրար կցեալ են առանց կապի. ասոնք անշարժ են, կլօրինեն մարդուս սկաւառակն, ուր պատսպարեալ է մարդուս ամենէն գերագոյն անդամն, ամեն տեսակ ղգացողութեանց մէկ խօսքով բանականութեան կեդրոնն, ըսել կուզենք ուղեղն և իր հազարումէկ ճիւղերն։

2. Երեսի՝ որ կբաղկանայ 8 փափուկ ոսկորներէ, ասոնք ալ առանց կապի իրար կցուած և անշարժ են. կպարուրնակեն, կը պահպանեն և կպաշտպանեն, մարդուս երկու աչքերն, երկու ականջներն, հոտոտելիքն և լեզուն։ Այսու ամենայնիւ պէտք է գիտնալ, որ երեսի 8 ոսկորներէն երեքն այսինքն, վերի երկու ծնոտները հաստ և ամուր են. իսկ վարի ծնոտն երեսի 8 ոսկերաց ամենէն երկայնն է, մանաւանդ որ սկաւառակի ոսկորներուն հետ կապերու միջոցաւ միացած ըլլալուն չարժուն է։

Այս ոսկորին, այսինքն վարի, և վերի երկու ծնոտներուն վրայ շարուած են մարդուս ակռաները, որոնց թիւն է 34 և տեսակն 3, որոնց վրայ պիտի խօսիմ Գ. խօսակցութեամբ։

3. Մարդուս սկաւառակի և երեսի ոսկորներէն յետոյ կուգան ուղնայար կոչուած ոսկորները, որ շարուած են մարդուս վիզի կռնակի կողմէն մինչեւ նստարանն, ասոնց թիւն է 26 և հինգ տեսակ են. ինչպէս առաջին եօթը կկոչուին կոկորդային երկրորդ տասնևերկուքը թիկանց և հինգ վերջիններըը միջաց, այս 24 էն յետոյ կուգայ սրբանի կոչուածն որ իրար փակած և անշարժ հինգ ոսկորներէ կբաղկանայ, վերջապէս էն ծայրինն որ միացած է վերինին հետ և չարժուն է։

Այս 26 ոսկորներըը բաղմաթիւ կապերով իրար միացած են, միայն առաջին եօթն և վերջին մէկ հատը կշարժին. ասոնք իրարու քով կցուելէն, երկու կողմէն երկու կարգ կլօր ծակերով մէկ կանգունի մօտ երկար խողովակ մը կյօրինեն, ուր կը պահպանուի և կը պատսպարի ուղեղին եռեւի վայրի ծայրէն ծնունդ առած ելլէն, որ կկոչուի ծեծ ենկեֆ։

4. Կոթեւէ ոսկորներ, որոնց թիւն է 27. ասոնք կարճ և բարակ ոսկորներ են և կյօրինեն իրենց ձեւովը մարդուս կուրծքը վանդակի մը նման, ասոնք կապուած են իրարու հետ բաղմաթիւ կապերով և կշարժին. այս վանդակին մէջ կպահպանուին երեք թոչուններ, որք են մարդուս երկու թոքերը (ճերմակ լեարդ) սիրտն և ասոնցմէ ծնունդ առնող ամենէն մեծ և

գլխաւոր թէ կարմիր և թէ սեւ արիւն պարունակող երակը (տամար) :

5. Կուրծքէն յետոյ կուգայ մարդուս ստլունն , որ չինուած է երկու խիստ կարծր և լայն ոսկորներով , որք սաքրումի և քօքսիսի հետ խիստ ամուր և հաստատ լծկնէ նման անօթ մը կչինեն , ուր պատսպարեալ են մարդուս ծննելութեան յատկացեալ անդամք . որոց վրայ կը գտնուին մարդուս ազիքներն , ասոնցմէ յետոյ ալ կողմը սեւ լեարդն և ձախ կողմը տալաքն որոնց ալ կռնակը կը գտնուին երկու երիկամունք :

6. Մարդուս ոսկորներուն մէջ ամենէն երկայն ոսկորներն են երկու վերի և երկու վարի անդամներն , որոնց երկու առաջինները կբաղկանան 60 ոսկորներէ , որք են օմօքլատն , որ կը կոչուի ֆէմէն և կգտնուի մարդուս ուսին կռնակը , յետոյ կուգայ Հիւմերիւսն , որ է մարդուն թեւին առաջին ոսկորն որ վերի ծայրովը օմօքլատին հետ իսկ վարի ծայրովը ալ թեւի վարի երկու ոսկորներուն հետ կապուած է , որք կկոչուին ռատիուս և ուլնա . ասոնցմէ յետոյ կուգան երկու կարգ ուրքը մանր ոսկորներ , յետոյ մատանց ոսկերք , որոնց մէջ կգտնուին չորս կարգի վրայ 19 հատ , որոնց ընդամէնը կըլլան վաթսուն :

7. Իսկ վարի երկու անդամոց մէջ կգտնուի 51 հատ , որք են նախ ֆէմօռ կոչուածն որ մարդուս ոսկորներուն մէջ ամենէն երկայնն է , ասի վերի ծայրովը կապուած է աւաշանի ոսկորին հետ , և վարի ծայրովը ալ ընկլուս և բէրօնէ , ոտից երկու ոսկերց վերի ծայրերուն հետ , որոնց ամենը ոսկրէլ կոչուած կըլոր ոսկորին հետ կկազմեն մարդուս ծունկ կոչուածն : Իսկ ընկլուսն և բէրօնէն իրենց վարի ծայրերովը միացած են ոտից մատանց առաջին երկու կարգ եօթն ոսկերց հետ , որոնց կցայորդ են ոտից մատանց միւս վերջին երկու կարգ 15 ոսկորներն , որոնց ընդամէնը կընէ 51 :

Ա. Մարդուս մարմնոյն մէջ ուրեմն քանի՛ տեսակ ոսկոր կգտնուի :

Բ. Ընդհանրապէս երեք , որք են , Ա. լայն և տափակ , ինչպէս են սկաւառակի , աւաշանի և ուսի առաջին ոսկորներն , Բ. երկայն որք են վերի և վարի անդամոց առաջին երեք ոսկորներն . Գ. տեսակէն են ֆոթ ոսկորներն , որ կգտնուին երեսի , ձեռաց և ոտից մատանց մէջ :

Ա. Մարդու ոսկորներուն ամենքն ալ կչարժին :

Բ· Ո՛չ , մարդուս 181 ոսկորներուն մէջ ամենէն աւելի շարժում ունեցող ոսկորներն են , վերի և վարի անդամոց , ձեռաց և ոտից ոսկորներն և երեսի ոսկերց մէջ ալ վարի ծնոտն : Աւելի պակաս շարժում ունեցողներն են , կոկորդի կռնակի կողմը դտնուած և կուրծքի ոսկորներն : Իսկ բոլորովին անշարժ են սկաւառակի , երեսի , աւազանի , ձեռաց և ոտից առաջին երկու կարգ ոսկորներն :

Ա· Ըսել կուզէք թէ , ոսկորները շարժման կողմանէ [ալ երեքի՛ կը բաժնուին :

Բ· Ա՛յո · Ա· ամեն տեսակ շարժում ունեցողներն ինչպէս են , երեսի ոսկորներուն մէջէն վարի ծնօտը , վերի և վարի անդամոց առաջին երեք երկայն ձեռաց և ոտից մատանոցոսկորներն : Բ· տեսակի շարժում ունեցող ոսկորներն են կուրծքի ոսկորներն , որք միայն մէկ տեսակ շարժում ունին : Գ· տեսակէն են անշարժ կոչուածներն , որ քիչ մը առաջ յիշած ենք . մէկ խօսքով համառօտիւ կրսեն ք թէ , ոսկերք երեք տեսակ են շարժման կողմանէ : Ա· ամեն կերպ շարժում ունեցողներն : Բ· մէկ կերպ շարժում ունեցողներն և գ· անշարժներն :

Ա· Ամեն կերպ շարժում ունեցող ըսելով ի՞նչ հասկնալու ենք :

Բ· Ամեն կերպ շարժում ըսելով հասկնալու է այն ոսկորն , որ դէպ յառաջ և ետ , աջ և ձախ , կլոր և այս հինգ կերպ շարժումները մէկէն ընդն , որով վեց տեսակ շարժում կըլլայ · ընթերցողն աւելի համոզուելու համար կրնայ իր անձին վրայ փորձել , ձեռաց և ոտից մատանոց վրայ :

Իսկ երբ այս վեց շարժումներէն մին միայն կարենայ ընել ոսկոր մը , այն կը կոչուի մէկ կերպ շարժում ունեցող ինչպէս են կուրծքի ոսկորներն ևայլն ,

Ա· Ինչ միջոցաւ ոսկորներն իրար միացած են :

Բ· Ջանաղան եղանակաւ և կապերով : Ա· եղանակն է , ոսկերք առանց որևէ միջնորդի , իրենք մէկզմէկու կցեալ , բաւած են իրրեւ մի ոսկոր , ինչպէս են սկաւառակի , երեսի , աւազանի ոսկորներն որք բոլորովին անշարժ են :

Բ· եղանակն է , ոսկորներն իրարու քով գալով , իրենք մէկ կողմէն իրարու հետ միացած են կապերով , որք միայն մէկ կերպ կշարժին , ինչպէս են կուրծքի ոսկորներն : Իսկ գ· եղանակն է , ոսկորներուն ծայրերը կլոր ըլլալով , սոյն կլոր ծայրն

ընդունելու չափ մեծութիւն ունեցող փոսի մը մէջ մտած է, ամէն կողմէ բաղմաթիւ կապերով միացած, ինչպէս են երեսի ոսիորներէն վարի ծնօտի երկու ծայրերը, վերի և վարի անդամոց առաջին երեքական ոսկերց երկու ծայրերն որք ամէն տեսակ շարժուձեներն ունին:

Ա. Ըսել կուզէք թէ ոսկերք այս մասին ալ, այսինքն իրար միանալու կողմանէ ալ երեքի կբաժնուին:

Բ. Այո, ինչպէս որ խօսեցանք:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԻՆ ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մօտ տարիներս չատ քանդակներ և նկարներ տարուած են եգիպտոսի ընդարձակ նահանգին այլ և այլ երկիրներէն եւրոպայի երեւելի քաղաքները: Հնութեան այս ծնայորդները մեծ կարեւորութիւն ունին երեք կողմէ: Նախ՝ իրրև արուեստական չինուածներ: Երկրորդ՝ իրրև պատմական յիշատակ և իրրև վկայութիւն, Հրէայներուն և Յոյներուն և Հռովմայեցիներուն առանց ապացոյցի մեղի տուած տեղեկութիւնները հաստատելու կամ հերքելու համար: Եւ երրորդ՝ այդ յիշատակները չինուած առեներ չինողներուն քաղաքական կամ մտաւորական կրթութեան աստիճանը հասկնալու համար: Առաջին կէտին վրայ չատ ըսելիք չունինք: Եգիպտացիք արուեստի կողմէ յառաջադիմութիւն չէին կրնար ունենալ քանի որ քուրմերու հակողութեան տակ էին որ հիներուն աւանդածէն ուրիշ կերպով բան մ'ընել չէին թողուր: Պատմութեան կողմանէ պակաս ձգած տեղեր չատ ունին հարկաւ. որովհետև ամէն թղթաւոր չենք չինել տալ էին սրբերը. և այն յիշատակեալ քանդակները և պատկերները սովորաբար աստանկ չենքերու աւերակներէն կգտնուին. բայց գտնուածներն ալ գրաւոր պատճութիւններուն մութ տեղերը լուսաբանելու համար մեծ արժէք ունին: Մանաւորապէս Մովսէս մարգարէին հինգ գրոց

մէջ դանուած մութ և գժուար հասկցուելու բաներուն հասկնալը կը դիւրացնեն ։

Կրթութեան կէտին գալով՝ նոր դիւտերը հին Եգիպտացւոց ընկերական վիճակը որոշ կերպով հասկնալու շատ միջոցներ տուած են ։ Անոնց հրապարակական և տնական վարքը ներկայացնող նկարներ կան , որով Թագաւորի պալատականներէն սկսելով որ խորհուրդի կը նստին մինչև նորատի մանուկը որ որորան կպառկցնեն և խանձարրով կը փաթթեն . ամենուն ալ ապրելու եղանակը մանրամասնաբար կը տեսնինք ։ Այն ալ չէ թէ բառերով չինուած խօսքերով , որոց միտքը երբեմն տարակուսելի կը մնայ , այլ պատկերներով և քանդակներով ներկայացուած որ հասկնալու համար գիտուն ըլլալու և խելք հոգնեցնելու պէտք չունի ։

Եգիպտացիներուն պէս քիչ ազգ կը դանուի որոց վարմունքին արտաքին ձեւերը՝ ինչ ներքին և մտաւորական կարծեաց վրայ հիմնած ըլլալնին իմացնեն ։ Անոնց հնութիւններուն շատկէկ հաւաքման մը վրայ ուշադրութեամբ մը նայելով անհնար է չը հասկնալ՝ որ հանդերձեալ կենաց վրայ ունեցած հաւատքնին անոնց վրայ մեծ ազդեցութիւն ըրած է . բայց այս հաւատքնին ալ աւելի նիւթական էր , անոր համար մեռելներուն մարմինն անապական պահելու մեծ փոյթ ունէին ։ Հին Եգիպտացիներուն ալ՝ հիմակուան Արեւելեան ազգաց պէս ղգաստացնող գործիք՝ ծեծը բռնուած էր և անոնցմէ եղած է այն խօսքը՝ որ կըսեն. «ծեծը դրախտէն եղած Աստուածային պարգեւ մըն է»։ Եգիպտոսի մեծերը այն պարգեւն իրենց ստրակարգեալներէն չէին խնայեր . և որովհետև Հռովմայեցւոց մէջ ծառաներն էին ծեծ ուտողները և ծառաները պէտութեան տուրք տալէ ազատ էին , անոր համար ամեն աստիճանի մարդ ծեծ ուտելը կը սիրէր որպէս զի անով պատժելով տուրք տալէն ազատի . ինչպէս կը պատմէ Ամմիանոս Մարկեղինոս Հռովմայեցի պատմիչը հիմայ ալ ասանկ տեղեր կը գտնուին ։

Վիլքինսն անդրիայի իմաստունը հին Եգիպտացիներէն մնացած նկարներուն օրինակն առնելու համար Թէբէի և Մէմֆիսի գերեզմանական փոսերը շատ պարտեզով հին ատեններն անոնց մէջ գործածուած արուեստներուն վրայ շատ հետաքրքրական բաներ գտաւ ։ Եգիպտացւոց Բուզամօսիս Գ. Թագաւորին դերեզմանին մէջ՝ որ Մովսէսի ժամանակակիցն էր և գուցէ Սուրբ

դրոց մէջ յիշուած փարաւոնն է, (վասն զի այս անունս անոնց հին թագաւորներուն մականունի պէս էր), կօշկակար մը նկարուած գտաւ ձեռքը հերիւն և կտրիճ՝ հիմակուան կօշկակարներուն գործածածին չար և նման. կարը բրունելու կապն ալ, որուն ծայրը սաքին տակն առած էր: Նոյն պատկերին վրայ առաղձագործ (մառանկոզ) մ'ալ նկարուած էր. քովը գոյն գոյն ներկուած փայտի կտորներով լեցուն սակառ (սէլէ) մը և ձեռքը կարմիր տախտակի մը կտոր որ ժանտադէնիի դեղին ներկուած տախտակի մը վրայ անցունելու կաշխատէր: Մէկ ուրիշ մըն ալ քովը՝ այս կտորներն իրար փակցունելու համար սոսինձ (թուխխալ) կը հալեցնէր: Այս պատկերս գտնուած տեղին նայելով՝ առ նուազն 3300 տարուան մ'ըլլալու էր: Մտաղները իրար միաւորելու (այար ընելու) վարպետութիւննին բաւական հասկցուած է Եւրոպայի այլ և այլ թանգարանները պահուած կտորներուն վրայ: Մասնաւոր վարպետութիւն ունէին չիկապղինձ (բիրինճ) տախտակներու աստիճան մը առաձգութիւն տալու. ինչպէս որ կը տեսնուի Գերլինու թանգարանը պահուած դաշոյնի մը վրայ և ասիկայ հարկաւ մետաղը հալեցնելու կերպին և ուրիշ մետաղի հետ միացնելու չափոյն արդիւնքն եղած պիտի ըլլայ: Մինոյն արուեստը իրարմէ հեռու երկիրները բանող անձանց մէջ իրարմէ տարբեր ոսկերութիւնները ալ կըլլան: Բայց երբեմն կը տեսնենք որ ժամանակով և տեղով իրարմէ հեռու ըլլալով միևնոյն գործոց ղբաղող մարդիկ միևնոյն սոսկութիւնը ունին: Եգիպտական հին նկարներու մէջ շատ տեսնուած է որ մարդ մը եղէգնեայ գրիչ մը ականջին տակն խօթած՝ կանգներ մէկու մը հետ կը խօսի: Ասիկայ հիմայ ալ վաճառականաց կամ ուրիշ գրասուններու գրագիրներուն ըրած բանն է, որ ամէն օր կը տեսնեմք:

Փղոսկր ալ որ հիմա շատ տեղ երկաթ և ուրիշ մետաղ հալեցնելու համար գործ կածուի, չար և նմանը կը տեսնուի եգիպտական նկարներուն մէջ: Տախտակի վրայ անցուցած կաշիէ տոպրակ մը, որուն վրայ արուեստաւորն ոտքովը կը կոխէ. ծակ խողովակ մը ունի՝ ուրկէց մէջի օդը կը փչուի. չուան մըն ալ՝ որով վերի կողմի տախտակը վեր կը քաշուի մէջը նորէն օդ մտնելու համար: Ամենէն Բ. թագաւորին գերեզմանին մէջ որ փրկչի թուականէն 1450 տարի առաջ էր, եգիպտացի մը նկարուած է ձեռքը չրմուղ գործիքով մը, որով առչեւը կե-

ցած ջրալիր ամանի մը մէջի ջուրը կը պարպէ, որ մեծ ըլլալով տեղէն չկրնար վերցնել։ կարելի է որ ասանկ գործիք մը բուն իսկ եգիպտացիներուն հնարքն ըլլայ, Նեղոսի յորդելովը ջուր կոխուած տեղերը պարպելու համար։

Թնջոյքներու և հացկերոյթի պատկերներ շատ գտնուելէն կը հասկցուի որ հին եգիպտացիներն ընկերասէր էին։ Ուրախութիւնը աւելցնելու ծառայող բան մ'ալ ետ չէին ձգեր, ինչպէս էին երաժշտական նուագարանները, եղանակաւոր երգեր, ոտքի խաղեր և ցատկելով խաղայողներ ալ. մինչեւ հրաւիրեալները գային և սեղան նստուեր նէ բաղդի խաղերով կըզբօսնէին։ Բարձրաստիճան մարդիկ կամ պատգարակով (սէտէայով) կամ կառքով կերթային, առջեւնուն բազմաթիւ ծառաներ և երբեմն սուրհանդակներ (չաթըր կամ բէյլիկ) ալ։ Այս սովորութիւնս անցեալ դարու մէջ գաղղիա ալ կար. նախադասիթը (ավլուն) ջուր պատրաստ էր ձեռքերնին և ոտքերնին լուալու համար, ձեռքերնին ձեռնոց և ոտքերնին մուճակ հագնելու սովորութիւն չունենալնին էր լուացուելնուն պատճառը։ Երբեմն հիւղերուն հանդերձ կուտային հագնելու և անով սեղան նստելու և այս հանդերձը չընդունելը մեծ կոպիտութիւն կը սեպուէր։ Ցեղս մերոյ պատմած առակը՝ թէ հասարակ հանդերձով հարսնիք գացող մէկը հարսնեւթերէն վրդովնուելուն թէ ինչո՞ւ հարսանեաց հանդերձ չէր հագեր, կը ցուցնէ որ եգիպտացւոց այս սովորութիւնը Հրեաներուն ալ անցեր էր և մինչեւ ցեղս մերոյ ժամանակը կար։ Եւ քը անուշահոտ ջուրեր կամ ոդիք կը ցանէին հրաւիրելոց վրայ։ Այս սովորութիւնս ալ Հրեաներուն անցած ըլլալը Ս. Աւետարանէն կը սորվիմք։

Խաղայողներու խումբը երիկ մարդոցմէ և կնիկ մարդոցմէ կը բաղկանար։ Երիկ մարդիկ բռնախաղութիւն (զօռախաղութիւն) և վտանգաւոր խաղեր կը խաղային. ոտքերնին վեր և գլուխնին վար բռնելով ձեռքերնուն վրայ կը քալէին։ Խաղերէն նկարներուն մէջ տեսնուածներն են սաարինջը և իտալացիներուն ֆօրա ըսածը։ Եգիպտացի նկարիչները մասնաւոր հանճար մ'ունէին ծաղրանկար (քարիքաթիւր) գրելու։ Բրիտանեան թանգարանը (Լօնտրա) եգիպտական պատկեր մը կայ, որ մէկ տեղ ժողվուած կանանց բազմութիւն մը կը ներկայացնէ որոց ոմանք ականջնուն օղերը իրարու ցուցնելով, ոմանք ալ մազեր-

նուն հիւսուածքը քովինին ցուցընելով՝ որինը գեղեցիկ ըլլալուն վրայ կը վիճին. և ամէն մէկուն՝ իրենը չհաւնուելուն սիրտը նեղանալը և բարկանալը յայտնի կ'երեւի, երբեմն ալ պատկերհանը ակնածութեան կանոնը մէկդի ձգելով չափէն աւելի գինովցած կ'ին ալ նկարած է:

Կանայք կը կաքաւէին, և մէկը կաքաւելուն մէջ սխալ մը գործեր նէ՝ աղէկ խաղցողներուն մէկը անոր ուսը կը հէծնէր, և սխալ կաքաւողը անոր էշը կըսուէր: Ճպարարներ (Հօգդապազներ) ալ կը գտնուէին մեծ հայկերոյթներու մէջ. և Ռոզէլլինի մէկ քանդակ մը հրատարակած է, որ գլխիվար դարձած չորս բաժակ կը ներկայացնէ. որոց մէկին տակը գունտ մը պահուած է: Ճպարարին խարդախ աչքը և սատանութեամբ նայուածքը հիմայ ալ ներկայացնող պատկերհան մը մեծ դովութիւն կ'ընդունի: Ապուշ մէկն ալ եկեր գունտը որ բաժակին տակն ըլլալը գտնել կուզէ: Դժուար պիտի ըլլայ անանկ խաղ մը կամ զբօսանք մը գտնել՝ որ մեր ժամանակը կենայ և հին փարաւոններուն ժամանակը ճանչցուած չըլլայ: Պատկերկայ որուն վրայ տան խաթունին քով բարձին վրայ նստած կը տեսնեն. կապիկ մը կամ փոքրիկ շուն մը կամ այծեամիկի ձագ մը, դրսէն եկողներն ալ հետզհետէ բարև կուտան կը նստին: Տղոց խաղալիկներուն տեսակներն ալ մեր ժամանակիններէն պակաս չեն. քոշը ըսուած խաղալիքն անգամ կայ: Երկու հարիւր տարի հաղիւ կայ որ մեր (Գաղիացիներուն) թագաւորական պալատներուն մէջ գաճաճ (ճիւճէ) կը տեսնենք. որ շատ հին ժամանակները եգիպտացւոց մեծերուն տունը կը գտնուէին: Այս մեծերը երբեմն աւելորդապաշտ մոռածութեամբ՝ կամ այլանդակ մարդիկ կը պահէին քովերնին, կամ անանկ մարդիկ որոց դէմքին վրայ իրենց Ֆգա–Ոզարի–Ոսիրիս ըսուած կուռքին քիչ կամ շատ նմանութիւն մը տեսնուէր: Ասիկայ Մէմֆիս քաղաքը այլանդակ կերպարանքով նկարուած կամ քանդակուած չասուածնին էր: Քիչ զարմանք չէ որ եգիպտացիները ասկէց 3500 տարի առաջ միևնոյն ճաշակը (կուստօ) ունենան, ինչ որ հիմակուան աաեներս կը տեսնուի Հռոմ և բոլոր եւրոպիոյ մէջ:

Զբօսանքներուն մէջ ցլամարտն (պուղա տէօյիւչիւ) ալ մոռցուած չէր, և ասոնք ծնծկուելու հանդէսները Սպանիայի մէջ հիմայ նոյնը ընդհներէն աւելի անվախ էին որ սրատուութիւն-

նին և ճարպիկութիւններին ցուցնելու համար մէկ ձեռքերնին կապել կուտային. և միայն մէկ ձեռքով կը կռուէին ցուլին հետ։ Յօդուածոյս հեղինակը ասոնք պատմելէն ետքը կըսէ, Թէ որ հին Եգիպտացիներուն և հիմակուան Եւրոպացիներուն բարուց և սովորութեանց և արուեստից կողմանէ նմանութիւնին ամենն ալ մի ըստ միոջէ դրելու ըլլալինք՝ խօսքերնիս չատ կ'երկրննար։ Հրեայներուն սովորութեանց և արուեստից հետ աւելի չատ նմանութիւններ ունին որով Ս. Գրոց չատ տեղերը դիւրաւ կը հասկցուին որ ասոնք չգիտցողներ կամ բնաւ չեն հասկնար։ Կամ սխալ կը հասկնան. որուն օրինակը կը տեսնուի Հարսնիքի հացկերոյթի հրաւիրած մարդոց յատուկ հանդերձ տալերնին զոր տէրն մերը ալ յիշեց մէկ առակին մէջ ինչպէս որ ասկէց առաջ տեսանք. և եգիպտացւոց այս սովորութիւնը չգիտցողները՝ այն հարսանիքին վայելուչ հանդերձ չհագած ներս մտնողը դուրս վռնտող թագաւորն անիրաւ կը կարծեն, մտքերնին անանկ դրած ըլլալով որ ամեն տեղ և ամեն ժամանակ տիրած և յարգի բռնուած սովորութիւններն իրենք գիտեն։

Յովհ. Պբ. Տբ. Կրպ. Տէրոյենց

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՄԷԿՍԻԿԱ

Նոր Մէկսիկայի բնակչաց թիւն այսօր կհաշուի մինչեւ 135000, այս թուոյն մէջ կդտնուին 8000 ի չափ Ամերիկացիք, 15000 ի չափ Հնդիկք և Ծնայօրդն ալ, այսինքն 10000էն աւելին Սպանիացի են։

Երկրին տարածութիւնն է 121201 քառակուսի մղոն, հիւսիսէն դէպի հարաւ 352 մղոն երկայնութեամբ և արեւելքէն դէպի արեւմուտք 332 մղոն լայնութեամբ։ Գաւառն ունի բազմաթիւ լեռներ, լեռնադաշտեր, դաշտեր և առատ ջրով գետեր, որք մէկ կողմէն Ատլանտեան և միւս կողմէն ալ Խաղաղական կամ Հարաւային Ովկիանոսները կվազեն։

Կլիման, բնօրառատոյն կլիմայէն աւելի բարեխառն է. օդը չոր և մաքուր. հաղիւ ձմեռ կըլլայ. քաղաքը խիստ առողջա-

կան է. օդին տաքութեան աստիճանը միշտ մի և նոյնն է. տարափոխիկ հիւանդութիւնք անծանօթ են: Անցեալ տարի, օդին տաքութեան աստիճանը մինչև 88 աստիճան (Ֆառա-նէյթի) բարձրացած, և ցուրտն ալ մինչև 5 աստիճան ցրօյէն վար իջած է. միջին տաքութիւնն է 48 աստիճան: Տաք ջրի բազմաթիւ աղբիւրներ կգտնուին, Բակօշաղ անուն տաք ջրի աղբիւրն, որ կգտնուի Սան Ֆիւան քաղաքին մէջ, իւթա անուն սահմանագլխին մօտ, այն աստիճան տաք է, որոյ մօտը գտնուող բնակիչք զանի ամեն օր կգսրճածեն, կերակուրներնին մէկ քանի վայրկեանի մէջ եփելու: Օձող Բալէռնիկ անուն հռչակաւոր տաք ջուրերն, որք կգտնուին Մաք Ռաէ բերդին մօտ, բազմաթիւ բնական աւազաններ յօրինած են: Այս ջուրերուն տաքութեան աստիճանը կհասնի մինչև 136. այս հանգային ջրոց բաղադրութեանը մէջ կգտնուին, ածուխ, ֆէրեմ և ռանեզիա և ուրիշ բազմաթիւ հանգերը. ասոնք խիստ հռչակաւոր են իրենց բժշկական յատկութիւններուն. այն գաւառի բժիշկք կհաստատեն թէ ոջոտճայի և մորթային բազմատեսակ հիւանդութիւնները կը բժշկեն:

Միայն կալին Քռիկ անուն դաշտին մէջ 30 ի չափ հանգային ջուրեր կգտնուին որոնց տաքութեան աստիճանը 130 էն 140 աստիճան կբարձրանայ:

Նոր Մեկսիկօ հողը խիստ բարեբեր է, ցորենը, գարին և դինին առատ է, և դրսէն ծախու առնելու պէտք չունի:

Քաղաքին հարստութեան առաջին աղբիւրն է ոչխարն ու չորքոտանիք. չատեր կգտնուին որոնց ամեն մէկը 10000 էն աւելի ոչխար և չորքոտանի ունի:

Այս գաւառին մէջ նկատողութեան կէտը սա է թէ, բոլոր բնակիչք երկու դասի բաժնուած են. խիստ հարուստ և աղքատ: Հարուստք բնաւ չեն աշխատիր, կապրին ամեն տեսակ առատութեան մէջ, և քաղաքակրթեալ են. իսկ աղքատք տգէտ և խեղճ:

Հարստոյ հարստութեան մէկ առաջին աղբիւրնալ է վուրթը:

Նոր Մեկսիկայի մէջ հանգք թէպէտ առատ չեն. բայց առայժմ մեծ ծախքի կարօտ ըլլալնուն այնքան հետեւսպ չգտնուիր. դեռ երկաթուղի չհնուած չըլլալուն երթեւեկութիւնք դիւրացած չեն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

ԿԱՄ

ՄԱԼԹԻՈՍ ԵՒ ԻՐ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Մալթիւս, բոլոր իր կեանքն անցուց, թշուառութիւնն և իր պատճառները սովրելու. այս ընկերական և անտեսական ամենաբարձր խնդրոյն վրայ տիւ և գիշեր կխորհէր, կքննէր և կրաստաբաններ. Կհարցնէր թէ, եթէ ամեն ողորմութիւն, ամեն առատաձեռնութիւն միշտ օգտակար և պէտք էր: Կը հարցնէր եթէ միշտ բաց ձեռք մը, ամենայն առատութեամբ և դիւրութեամբ, տալով բարւոյն և չարւոյն, ծոյլին և աշխատասէրին, իր պակասութեամբն աղքատացողին, և արժանաւոր աղքատին, այնպիսին՝ ի՛րօ՛ք բարերար ձեռք մ՛էր, և եթէ այսպիսի ողորմութիւն մը չատ անգամ՝ և խիստ չատ անգամ մեծ գէշութիւն մը չէ՛ր, եթէ գէշ էր տուողին խիստ գէշ է ընդունողին որովհետև ընդունողին ծոյլ մնալու մշանջենաւոր խրախոյս մը եղած կըլլայ, մանաւանդ ծոյլութեան ընկեր և աղտ ամեն տեսակ մեղութեանց:

Ըստ Մալթիւսի, անխոհեմ, անխորհուրդ, կոյր և անարժան ողորմութիւն տալն և օգնելը, խիստ վտանգաւոր է, և որ փոխանակ գէշութիւնն, աղքատութիւնը մեղմացնելու, նպաստելու, զանի կծանրացնէ և կմշանջենաւորէ:

Մալթիւս կարգիլէ և խստիւ կարգիլէ անխոհեմութեամբ և անխոհեր եղած օգնութիւններն, որք կըսէ, թէ տուողն և թէ ընդունողը միանգամայն կ՝վատթարացնեն: Դ[illegible]ն անուան չարժանացող ողորմութիւնը կդատապարտէ. զի դ[illegible]ն սէր կնշանակէ կըսէ, որովհետև չէ թէ սիրտն է, այլ ձեռքն է որ կուտայ գոց աչօք. նոյնպէս և ոչ բ[illegible]ն անուան կարժանանայ, որովհետև չէ թէ աղեկութիւն է գործածն, այլ գէշութիւն: Բայց անի գատապարտելով չէ թէ բոլորովին ոչնչացնելու համար էր, այլ ընդհակառակն ուրիշ տեսակ օգնութեամբ, ուրիշ տեսակ բարերարութեամբ և ողորմութեամբ փոխանակելու: Նախատես բարեգործութեան և արժանի ողորմածութեան առաջնորդ և պաշտպան եղաւ, օգնել նմանին, առանց զանի վշասելու, առանց զանի հաւատացնելու, առանց

ղանի ճնշելու , առանց ղանի ծոյլութեան առաջնորդելու , այլ ընդհակառակն , ըլլալ , եթէ կարելի է , պատճառ խրախուսի, քաջալերութեան , թէ բարոյական և թէ՛ նիւթական յառաջադիմութեան միանգամայն :

Մալթիւս ըսած է թէ , արդարև կայ գերագոյն օրէնք մը, օրէնք բնութեան , որ կ'ըսէ մարդուս , ըստ առաքելոյն Պօղոսի , թէ նա որ աշխատիլ չուզէ մի՛ ուտիլ . բայց ըսած է նաև թէ , կան այնպիսի դիպուածներ , անակնկալ դժբաղդութիւններ որոնց պէտք է մարդս օգնել . թէ չատ անգամ, և խիստ չատ անգամ, առանց պակասութեան կամ առանց ծանր պակասութեան , ճշմարիտ թշուառութիւններ կան, և ահա այնպիսի պարագայներու մէջ չատ բան կայ օգնելու և նպաստելու իր նմանին : Ըսած է նա մանաւանդ թէ նեղութեան մէջ իյնող մարդուն նիւթական և անցաւոր նպաստէն զատ բան կայ ընելու . թէ պէտք է սովրիլ թէ ի՛նչ անձնական պէտքեր , ցաւեր , ստիպողութիւններ և նեղութիւններ ունի . ահա այս է Մալթիւսի սկզբունքն : Կ'յորդորէ նախ և առաջ կամաւոր և գործնեայ ողորմութիւնն , այն տեսակ ողորմութիւնն որ անծանօթ չէ , որոնք մեկ կողմանէ ցաւերն , որ գիտէ թէ ինչ պէտք կապերով ձացած են հարուստն և պտիտն և որ պատիւ և փառք կհամարէ այս ինչնին , որ այցելութեան կերթայ թշուառին խրճիթն , և ոչ միայն իր պիտոյքները կտուէր , այլ և նորա սովորութիւնները , բարոյական յաժարութիւնք , որ վերջապէս լկտի և անամօթ մուրացկանին երես դարցնելով գիտէ պաշտպանել , մխիթարել տատանող կամ կինող տկարութիւնն :

Այս է ահա , համառօտիւ Մալթիւսի վարդապետութիւնն . և այս ամենաբարձր խնդրոյն վրայ գրած գրքին սկզբունքը :

Մալթիւս կըսէ նաև թէ , պէտք է օգնել մինչև սահման մը ծոյլ և անխոհեմ աղքատին . կարելի եղածին չափ , աստիճան մը օգնել , առանց աղքատ ըլլալու պատճառը զօրացնելու . և ասոր համար չէ թէ ողորմութիւնը բոլորովին չնչելու է (զի այն ատեն պատասխանատուութիւնն ոչնչացնել է , առանց որոյ բարոյականութիւն չկայ) , այլ թշուառութիւնը մեղմացնել աստիճան մը , որ ըստ ինքեան արժանաւոր պատիժ մ' է :

Մալթիւս կ'յայտարարէ նա և թէ այս վարդապետութիւնները , թէ բանաւոր և խոհեմ ողորմածութեան այս խրատանե-

ըրն անակնկալ և կարգէ դուրս դիպուածոց համար չեն և ըլ-
լալու չեն. և զոր օրինակ երբ մարդու մը ոտքը կամ ձեռքը
կոտրի, առանց ժամանակ անցնելու զանի բռնելու և օգնելու
է, և չհարցնելու է թէ արդեօ՞ք իր պակասութեամբը կամ ոչ
ինկաւ: Մեկ խօսքով, Մալթիւս անարժան և անխոհեմ ողոր-
մութիւնը կդատապարտէ, իսկ կյորդորէ ճշմարիտ և արժանի
ողորմութիւնն և բարերարութիւնը, կսովրեցնէ զանոնք գոր-
ծածել, ամենայն մանրամասն պարագայներով, մեծ խնամօք
և զգուշութեամբ:

Հոս խիստ յարմար է իսլանտացի հռչակաւոր Արքեպիսկո-
պոսի մը, վաթըլէյ անուն (որ երբեմն Մեծն Բրիտանիոյ Տիւպ-
լէն քաղաքի Արքեպիսկոպոսութեան մեծ պաշտօնը վարած էր)
պատմութիւնն յառաջ բերել, որ Մալթիւս սկզբան հետեւած
էր:

Այս կղերականն, ինքզինքն երջանիկ կհամարէր մեռած
վայրկեանն, որ ըսած է թէ «ինչպէս երջանիկ կհամարիմ ինքզինքս ծով
ձողոյի մը վրայ պես ելլալ մուրացկանի մը չեռուէն քանա երբեք ոտակ լսալս,
և այս գործը կատարելու համար, քանա վեց ամիսէ չեռուս գրպանս պահելս:
Բայց ուրախ եմ ուրիշ գործեր տեսնելուս: Որովհետև մուր-
բացկանաց տալու 5, 10 փարանները մի առ մի ժողվելով մե-
ծագործութիւններ կատարած է, ճշմարիտ թշուառութիւննե-
րու օգնած է, տկարները քաջալերած և ցաւագարները մխի-
թարած է. ով կրնայ հաւատալ, երբ ասոր թէ, այս մեծա-
նուն կղերականն, Անդղիոյ զանազան գաւառաց, քաղաքաց
գիւղաքաղաքաց և գիւղոց մէջ չորս հազարէն (4000) ա-
ւելի դպրոցներ իրենց եկամուտներովնէ ապրեցնելու հաստա-
տած էր իր մեծ անուամբը, տաղանդովնէ ազդեցութեամբ
բըլն այս հռչակաւոր Արքեպիսկոպոսին սկզբունքն ալ էր,
Մալթիւսի հետեւող ըլլալէն զատ, կբարոզէր միշտ թէ ամենէն
առաջին նախակրթական դպրոցն մը մէջ անգամ պետք է ըն-
թեռնան գիրքերնիս, անխտրաբար ամեն
աշակերտաց աւանդել:

Ահա Արքեպիսկոպոս մը (որ դեռ երեք տարի կայ մեռ-
նելէն) որ մուրացկանին ողորմութիւն տալը մերժած է, ասկէ
աւելի, օգտակար, ճշմարիտ, աւելի բերրի և մշտնջենաւոր բա-
րեգործութիւն մը ընելու համար, այնպիսի բարեգործութիւն
մը, ողորմութիւն մը, որով ոչ միայն արժանի է, աղքատաց ցա-

ւերը կմեղմացնէ , այլ մանաւանդ՝ աշխարհիս աղքատութիւնն ոչնչացնելու կնպաստէ ։

Ա. ԶԳԱՑԻՆ

Ա. Ճշմարիտ կենաց տարերքը ազատութիւն է ։

Բ. Սահմանադրական իրաւունքը բնական ազատութեան չափն է ։

Գ. Մեր Սահմանադրութիւնը անիրաւութիւն է , զի բնական ազատութեամբ չափուած չէ ։

Ա.

Ազատութիւնը մարդուս ի բնութենէ սահմանեալ իրաւունքըն ըլլալով օրօրոցէն կը սկսի , և մանկան առաջին ձայնը զանի կը հաստատէ , երիտասարդին չրթները նովաւ կ՚ոգեւորին , և առոյգ և կատարեալ հասակաց վրայ կը փայլի . և մինչեւ իսկ ծերութեան մաշած նչխարները նովիմբ կ՚ուժեւորին ։

Այս կազմակերպութեամբ և այս ոգւով խմորեալ ամեն տուն՝ ամեն քաղաք՝ կամ իշխանութիւն օրօրոցէն մինչեւ գերեզման աղատութեան հետամուտ կ՚ապրին , և կը մեռնին ։

Բայց այս ընդհանրական գործառնութեան մէջ ոչ ամեն տուն ո՛չ ամեն քաղաք կամ իշխանութիւն նմանօրինակ աղատութեամբ չեն վարուիր . այլ ըստ միով անուամբ ազատութեան անհունապէս կը տարբերին գործովք ազատութեան . և այս մեծ յեղափոխութիւնը՝ որ ընկերական ամբողջութեան մեծ տըգիտութիւնն է , անիրաւութիւն և վնաս ծնելով , կենաց բոլոր ներդաշնակութիւնը կը խանգարէ , որով փոխանակ հաւասար կեդրոնացուածութեան՝ մին ազատ՝ և միւսն գերի , մին կարող՝ և միւսն անկարող երած է , և անտի սկիզբն առած է , մարդկային ազգի բովանդակ թշուառութիւնը ։

Կենաց բոլոր պիտոյից մէջ խիստ մեծ և կարի յոյժ կարեւոր է ազատութեան խնդիրը , վասն զի կենաց բուն տարերքն է , և որում գրեթէ ցայսօր ժամանակի որոշ սահման մը դնուած չէ թէ ,,

Ո՞րն է ճշմարիտ ազատութիւնը , և թէ բնութիւնը ինչ սահմանով չափած է զայն ի մեզ ։

Արդ ըստ որում ազատութիւնը հանուր մարդկութեան

լինդիր , և նորա չգոյութիւնը ապականած է կենաց սահմանը , անոր յառաջ եկած է բռնութիւն՝ հարստահարութիւն՝ զրկանք , անոր ծնունդ առած են պատերազմունք և աւերածութիւնք , և մահ և հառաչանք և խանդարումն ընկերական բարւոք չինուածոյն անոր սկզբնաւորեալ են , և մեզ նման վառաւոր ազգաց խանձարուրն ողբալի աւերակաց վոխարկած և գերեզմանները նորա վսեմ յիշատակի մատեաններն ըրած են :

— Ի՞նչ է մարդ . ոչինչ զանգուածմը , որ ըստ դիպած կը ծնի յաչնչէ , կապրի անասնոյ պէս , և կը վերջանայ՝ ինչպէս գարնան խոտը դաշտին մէջ . նա յիշատակ չունի . նա նպատակ չունի , նա չկար , ու չկայ , ահա՛ այս է նորա գոյութիւնը — :

Տգէտ աշխարհին առաջին գասն է այս , մեր գիտութիւնը այս է , և սակայն այս գիտութիւն չէ , որովհետեւ ոչինչ է , և եթէ ասի բաւական չհամարելով հոգւով պահ մը բանականութեան աշխարհը վերանամք կտեսնեմք որ մարդս ո՛չ միայն ծնելու ապրելու՝ և մեռնելու դիպուածական կոչումն ունի, այլ խորհրդաւոր նպատակի մը , և իւր էութեան մեծ գիտութեանը ընդունած հրաշալի հեղինակութիւն մ՚է : կը տեսնեմք որ , նոյն ինքն մարդ , անմահութեան տարերօք խմորեալ՝ յաւիտենական աշխարհին մի յատուկ արարածն է , քան այս վշտաց հովտին ընակիչը : Եւ եթէ սակաւիկ մի և յառաջ ընթանամք , բացորոշ կը տեսնեմք որ , անսահմանութեան մէջ անսահման կէտ մի է նոյն իսկ անսահմանութենէն սկզբնաւորեալ :

Ա.յսպիսեաւ կը տեսնեմք որ , մարդը ոչինչ չէ և մեծ քան զտիեզերքն է :

Ա.յս սկզբամբ միայն ճշմարտութիւն մի կըլլայ հաւատալ թէ ուրեմն տիեզերքը մարդոյ համար սահմանեալ է , և տիեզերք՝ կեանք՝ աղատութիւն մարդունն են , սակայն եղմմունքը հոս է , թէ այս երեքը ՚ի մի անձնաւորեալ չեն , այլ երեք ընդդիմամարտք են իրերայ :

Ա.յս տեղն է որ կը տեսնեմք թէ , այն ազատ ու մեծ մարդը տիեզերաց՝ կենաց և աղատութեան պատերազմին գերին է , և կըսեմք :

— Ահա անսահմանը ոչնչացած , ահա հոդակոյտը փչրած — Ա.յսպէս ՚ի մասին մարդոյ մի դերագոյն արարած լինելուն համոզուած՝ անհրաժեշտ կըլլայ մեզ թողուլ զամենայն ինչ , և մի միայն զկորուսեալ մարդն , այն է զաղատութիւնն բնաւել .

որով իւրաքանչիւր ուժեք պարտ կլինի աղատութեան մթադնեալ տաճարին մէջ ճրագ մի վառել ըստ լուսոյն, որ հետզհետէ բազմանալով չողշողէ այն մեծ կամարին տակ, որ բոլոր բանական աչխարհիս վրայ կը տարածի և ղանի կը փրկէ։

Մեր հոգին մինչեւ որ ազատութեան յուի խնդիրը չ'երկնէ, մեր միտքը մեր ճշմարիտ կեանքը չ'ծնիր։

Բայց մեր հոգին ամուլ եղաւ, և մեր մտքերն անղաւակ մնաց։

Տգիտութիւնը ղայն երկնեց, և մահ ծնաւ։

Մահը ոչնչութիւն է։

Ոչնչութիւնը եղաւ ընկերական ազգին բաժակը։

Փոքրիկ կայծ մը բռնկելով աչխարհ մը կը լուսաւորէ, վոքրիկ օրինակ մը տամ կենաց այս մեծ աչխարհը լուսաւորելու համար։

Ինքնուին կը խորհիմ թէ, մարդ մի եմ, տկար արարած։ Արևն ինձի լոյս կուտայ, և երկիրը անուղղ. ծնած տեղես անղօր էի, և մեռնելու տեղես նոյնը կը մնամ։ Բնական օրէնքը այս դայեակները տուած է ինձ, և կը թուի թէ անոնցմով եմ, և առանց անոնց ոչինչ եմ։

Որոց համար հարկ եղած է մեզ պատսպարան չինել, երկիր մչակել, արհեստ հեղինակել, և ըրեր եմ զատօնք. բայց ի՞նչ նպատակաւ։

Ինձի տրուած կեանքը պահելու և խաղաղաւէտ ընելու համար, որով կ'ղգամ թէ, եմ ինչ։ Սակայն կենաց պահանջն այսչափով միայն չ'ամբողջանար։

Եւ երբ կը տեսնեմ որ բնակարանս ձեռքէս կ'առնեն, մչակութիւններս կը ժողովեն, արհեստս կը բռնաբարեն, և ես ինձի տրուած կեանքը չեմ կրնար պահել, յայնժամ կ'ղգամ, թէ չեմ ինչ։

Ահա այս փորձով կիմանամ, թէ ճշմարիտ կեանքը թափուր է ինձմէ, և ահա հոս կը համոզուիմ, թէ առանց ազատութեան ճշմարիտ կեանք չկայ, և առանց ազատութեան ճշմարիտ մարդ չկայ։ Այսու ամենայնիւ դիտնալու է թէ, ղոր օրինակ ինչպէս առանց հիւանդութիւնը դիտնալու՝ ղանի բառնալոյ համար եղած չանքը անօգուտ է, նոյնպէս առանց ազատութեան տարերքը դիտնալու ղայն ընդ խոչ և ընդ խութ որոնելը բնաւին անօգուտ է մարդոց։

Շարունակելի

ՍԻՄՈՆ Հ. Մ. ՖԷԼԷԿԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

—

ԴԻՑԱԶՈՒՆՔ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

Քոբեռնիկ. Կալիլէ, Բասկալ.

Աշխարհիս մէջ երկու տեսակ փառքեր կան. մէկն է, Աղգայ գլուխ ըլլալ, պատերազմիլ, օտար քաղաքայ տիրել և այլն. միւսն է, մարդկութեան բարերար հանդիսանալ, ապրիլ չէ թէ իրենց անձնական շահուն, այլ գիտութեան յառաջադիմութեանն, և մարդկութիւնը գերի վիճակէն աղատել:

Առաջին դասէ եղող հռչակաւոր անձանց անուններն ու բարքերը սովրիլ ուղղներուն, Տիեզերական պատմութիւնը պատրաստ ըլլալուն, մեր խօսքը պիտի վերաբերի երկրորդ դասին և կսկսինք նախ մեծ աստղաբաշխներէն, որոց կպարտաւորինք սիեղերիս ճանաչումն: Որով ընթերցողը պիտի սովրի թէ, եթէ գիտութիւնն այսօր սքանչելի յառաջադիմութիւն ըրած է, ի շնորհս բազմաթիւ անձնուէր անձանց անխոնջ աշխատութեան, նեղութեան է. այս դաս հռչակաւոր անձանց մէջ մահ և վիրաւորեալ կը դանուին, բայց չէ մտացածին ըրնորքներու, անձնակամութեան կամ հպարտութեան համար է, այլ ի յաղթանակ ճշմարտութեան:

Նոր աստղաբաշխական հիմնադրաց առաջինները կը համարին Քոբերնիք և Կալիլէ, որ մէկ դար առաջ աշխարհիս դերութիւնն անքակտելի հիման վրայ հաստատեցին:

Քոբերնիկ, որ ծնած է 1472 և մեռած է 1543 թուականին, 71 տարի ապրող Բօլօնիացի հայագործի մը զաւակ էր: 10 տարուան հասակին մէջ հայրը կորսնցուց, և 17 տարուան հասնելուն, սկսաւ բժշկական արհեստին աշակերտիլ: Բայց վերոյիշեալ արհեստին աշակերտելոյն հանդերձ, իր ժամանակին աստղաբաշխական գրքեր ալ կարդալու կդբաղէր, որ վերջապէս այս գիտութեան հետեւեցաւ, թողլով բժշկականութիւնը: 26 տարեկան եղած առեն Հռոմ դնաց և աշակերտ եղաւ հռչակաւոր աստղաբաշխ Ռեճիոմոնթանուս անուն դասատուին. դեռ 30 տարու չեղած Բօլօնիա իր հայրենիքը դարձաւ և կանոնիկոսութիւն մը ընդունեց, որովհետեւ իր ժամանակը կանոնիկոս ըլլալը պատուաւոր վիճակ մ'էր. անկախ և